# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/101

«29» Մարտի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2019թվականի մարտի 27-ի թիվ 20-Ա որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե` h. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 27» Մարտի 2019 թվական N 20-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետերով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 12 մարտի 2019 թվականի թիվ 82-Ա որոշման.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018թվականի գործունեության արդյունքների ամփոփման ժամանակ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված միջացառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. մարտի 27
Ձորագետ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի
Ձորագետ համայնքի ղեկավարի
2019թ. մարտի 27-ի
թիվ 20-Ա որոշման

# ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ ը/կ | Հանձնարարականներ և առաջարկություններ | Պատասխանատու | Կատարողներ | Կատարման ժամկետը | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Համայնքների ջրամատակարարման համակարգի ցանցի վրա անհրաժեշտ հակահրդեհային ջրածորանների (հիդրանտների) կամ այդ նպատակի համար մոնտաժված լցավորող ծորակների տեղադրում և շահագործում: Չգործող հրշեջ-հիդրանտների վերանորոգում | Համայնքի ղեկավար | համայնքապետարանի աշխատակազմ | Տարվա ընթացքում | Առկա ջրագծերի վրա տեղադրված են հիդրանտներ: Նոր կառուցվող ջրագծերի դեպքում կձեռնարկվեն միջոցներ հակահրդեհային ջրածորանների՝ հիդրանտների տեղադրման ուղղությամբ |
| 2. | Մարզի կապի և ազդարարման համակարգի արդիականացում՝ էլեկտրական շչակների ձեռք բերում, անսարքների վերանորոգում, դրանք կենտրոնացված ազդարարման համակարգին միացում | Համայնքի ղեկավար | համայնքապետարանի աշխատակազմ | Տարվա ընթացքում | բյուջեի հնարավորության դեպքում ձեռք կբերվի ազդարարման համակարգ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանների մշակում | Համայնքի ղեկավար | համայնքապետարանի աշխատակազմ | Մինչև 01.12.2019թ. | 30.06.2018թ-ի համայնքի ղեկավարի թիվ 21-Ա որոշմամբ մշակվել է համայնքի ԱՌԿ պլան |
| 4. | Գործող ԱՌԿ պլանների վերանայման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում՝ (նշելով նաև ԱՌԿ պլանների միջոցառումների արտացոլումը զարգացման ծրագրերում) | Համայնքի ղեկավար | համայնքապետարանի աշխատակազմ | Տարին մեկ անգամ | ներկայացվում է ամենամյա տեղեկատվություն |
| 5. | Համայնքների զարգացման ծրագրերում և համայնքային բյուջեներում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչների ու միջոցառումների ընդգրկում | Համայնքի ղեկավար | համայնքապետարանի աշխատակազմ | Մինչև 01.12.2019թ. | բյուջեի հնարավորության դեպքում կներառվի |
| 6. | Անտառամերձ համայնքներում ստեղծված անտառային կամավոր հրշեջ-փրկարարական խմբերի կարողությունների բարձրացում | Անտառամերձ համայնքի ղեկավար | համայնքապետարանի աշխատակազմ | Տարվա ընթացքում | 15.02.2018թ-ի համայնքի ղեկավարի թիվ 4-Ա կարգադրությամբ ստեղծվել է կամավոր հրշեջ ջոկատ |

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ